

ԿՈՉ ՄՈՒՐԱՏ-ՌԱՖԱՅԷԼԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՍԱՆԵՐՈՒՆ

Իտալիոյ մէջ գանուող Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանի շրջանաւարտներուն նախաձեռնութեամբ կազմուած է մշակութային եղբայրակցութիւն մը «Մուրատ Ռաֆայէլեան նախկին սաներու Վիտերիւն» անունով:

Նկատելով որ քաղաքական և այլ պայմաններու բերումով, Պոլսոյ մէջ գոյութիւն ունեցող համանուն միութիւնը դադրած է գործելէ և Մուրատ-Ռաֆայէլեան բազմաթիւ շրջանաւարտներ ցրուած են զանազան երկիրներու մէջ, նորակազմ միութեան առաջին ձգտումը պիտի ըլլայ, բոլորն ալ համախմբել իր շուրջ և անդամներու միջև ջերմ ու յարատե հաղորդակցութիւն մը ստեղծել:

Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը իր հիմնարկութեան թուականէն սկսեալ տուած է մտաւորականներու սերունդ մը, որ բաւական մեծ զեր ունեցած է մեր ազգային ու մշակութային կեանքին մէջ: Այդ կոչումին գիտակից նոյն վարժարանի նախկին սաները կազմակերպուելով հիմնադիրներու նուիրական անունին ներքեւ, նպատակ ունին ստատրել ու ձեռնարկել մշակութային ազգօգուտ գործեր, ինչպէս նաև շահագրգռուելով հայ գաղութներու վիճակով, աշխատել անոնց բարելաւման:

Այս առաջադրութիւններով կազմուած միութիւնը իր ընդհանուր ժողովին մէջ վաւերացրելով առժամեայ ծրագիր-կանոնագիրը, ընտրեց հետեւեալ հինգ անձերէ բաղկացեալ վարչութիւնը:

Նախագահ	ՏԹԲ.	Նշան Տէր-Ստեփանեան
Քարտուղար	ՏԹԲ.	Երուանդ Արզումանեան
Գանձապահ	ՏԹԲ.	Մանուկ Խամպէկեան
Խորհրդական	ՏԹԲ.	Հրանտ Զրաքեալ
Խորհրդական	ՏԹԲ.	Գերենիկ Ճիգմէեան

Միութեան կեդրոնատեղին է Իտալիոյ Միլան քաղաքը:

Վարչութիւնը Հայ մամուլի միջոցաւ կոչ կ'ընէ բոլոր անոնց՝ որոնք Մուրատ-Ռաֆայէլեան և Բերայի ու Գաղկեղոնի Միթիթարեան վարժարաններէն շրջանաւարտ եղած են, և կը խնդրէ որ փութով տեղեկացնեն իրենց անունն ու հասցէն, որպէս զի կարելի ըլլայ յարաբերութեան մէջ մտնել անոնց հետ և պատրաստել ընդհանուր ցանկը անդամներուն:

Վարչութիւն

Հասցէ Dr. Jervant Arzumian

P. O. B. 462

MILANO (Italie)

Ս Տ Ա Յ Ո Ւ Ա Ծ Գ Ր Ք Ե Ր

Մինաս Զերագ. — Արեւելեան վիպակներ. ուսումնասիրութեամբ մը Արատչէս Յովհաննէսեանէ. Հրատարակութիւն «Օշական». Բարիզ Տպ. Մատիս. 1927, էջ 216, գին ֆր. 20. — (Ֆրանսայի համար):

Արշակ Այսոյաձեան. — Մինաս Զերագ, իր կեանքը և գործը. իր 60ամեայ յորելեանին առթիւ. Գահիրէ, Տպ. Պաղտատար 1927, էջ 368, գին տու. 1.:

Ա. Անարունեան. — Իմ գիրքը. հասար Առաջին, Մանկութիւն. Պարիզ 1927, էջ 320:

Գ. Դժդեմ. — Արդիների պայքարը հայրերի դէմ. Սելանիկ, Հրատարակութիւն և տպագրութիւն «Գողթան» գրատան. 1927, էջ 104, գին 1. ֆր.:

Կիւրեղ Խրատյեան. — Մովսէս Կէօլճիկ, պատկերազարդ. Մարտչլ, տպ. Արարա 1927, էջ 304, գին ֆր. 22. — (Ֆրանսայի համար):

Տօրթ. Լ. Գրիգորեան. — Թէ ինչ պատմեց Թրէրոնէ մը կամ ինչ է Սիֆիլիսը ինչպէս պաշտպանուիլ — ինչպէս դարմանուիլ. Փարիզ, 1927, էջ 64, գին 6.ֆր.:


Յովհաննէս Պընեան. — Սողա թագաւորը Սողայէլի դէմ, Սուրբ պատերազմ աշխարհի մայրաքաղաքը վերագրուելու համար. հրատարակութիւն ամերիկեան Պորտ Ընկերութեան. Կ. Պոլիս 1927, էջ 344:

Նկարիչ Ստեփան Աղաջանեան, կեանքն ու արուեստը (պատկերազարդ) «Արուեստ» ի գրադարան Թ. 1. Երեւան 1927, էջ 24, գին 30 կոպ.:

▶ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ◀

“ԳԵՂՈՒՆԻ”

1927



ԳԻՆՆ Է՛ ԿԱՆԻԻԿ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՒԱՐ

3.50

Գիմել

IMPRIMERIE ARMÉNIENNE

“Illustration Kéghouni”


St. Lazare VENISE (Italie)

Ամերիկայի Յարգոյ բաժանորդները
և բաժանորդագրուիլ ուզողները կրնան
ղիմել չայ նրթական շիմնարկութեան,
Յիտեիալ Ռասցէոյ

ARMENIAN
EDUCATIONAL FONDATION


331 Fourth Avenue

NEW YORK N. Y.



ՇՔԱՂ, ու անթերի տպագրութեամբ, կազմուած տասը քառւածայ մեծա-
գիր թերթերէ, պննուած իննսուներեք սև ու տասներկեց գունաւոր մեծ
ու փոքր նկարներով, բոլորն ալ վերաբրտագրութիւն ազգային արդի ար-
ուեստագէտներու գործերու, ճոխացած միանգամայն լուրջ և շահագրգռող
յոյժաւածներով՝ գեղարուեստական և գրական պարունակութեամբ:

«Գեղունի» ի սոյն պրակը իր գրական ու գեղարուեստական մասերով
կը կատարերազօրծէ, ու կը պատկէ նախորդ տարիներու պրակները:



«Գեղունի» ի նախորդ տարիներու պրակներու ամբողջ նաւարանդն (տարի-
ներ 1901 - 2 - 3 - 4 - 5 - 9) կ'արծէ նախապարմամբախով միասին
Ինկազմ՝ տպ. 8. — Կիսովաշի տպ. 11. —